**Նախագիծ**

**Երկրորդ ընթերցում**

**Կ-663-15.09.2023-ՄԻ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 5-րդ մասում «դրույքաչափերը,» բառից հետո լրացնել «հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքի համար վճարները,» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 45-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1. մասով.

«7.1. Հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքի դիմաց վճարման համար ծախսերի փոխհատուցման չափը հաշվարկվում է հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի վճարման համար նախատեսված ընդհանուր գումարի տասնհինգ տոկոսի չափով:»:

**Հոդված 3.** Օրենքի 45-րդ հոդվածի 8-րդ մասում «աշխատանքի վարձատրության» բառերը փոխարինել «պաշտոնային դրույքաչափերի վճարման» բառերով.

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: